

«...ծա չիրիմ դու գովելի
 Բարեկուն մեծ քաղաքի
 ...եղ կայ լուր այր բարեկի
 ...ս աղնիւ եւ մահուտի
 Եղեալ աղղէն աղէքսանդրի
 ...աւորեալ դու ի մարմնի
 ...նէ սրտիւ ... կրկնակի
 Տեսեալ ծառայ բարի
 ...աբար յոյժ ցանկալի
 ...ական գոլ անուանի
 Ամէնեցուն հոգաց երկրի
 ...է քս. քաջ տարածանի
 ...է խոնար առաքինի
 Համայն աղգաց հայոց...
 ...հասեալ կէտ վախճանի
 ...ի ցաւոք մահուամբ...
 ...վաթսուն հինգ ամի
 Հանգեալ ի կենաց աստի
 Ամիոսիցեալ այս դի
 Դաւիթեան Աստուածատուր
 Ի թվին ՌՄ . . . » :

վերջին երկու տողերը խնդրական են :

Ասոնցմէ զատ՝ հոս ու հոն Եկեղեցւոյ պատերուն հիւստեամ (ներքին կողմը) պատուհաններուն մէջ կ'երևան հայերէն արձանագրութեամբ քարերու կտորներ :

Եկեղեցին գուցէ յարմար դատուի օր մը՝ ծախուելու, այն ատեն լաւ կ'ըլլայ որ արձանագրութեանց լաւագոյնները փոխադրուին նոր Եկեղեցւոյ բակը : Պաղտատի հին Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնայ, իսկ նորը՝ Ս. Երրորդութեան : Հին Եկեղեցւոյն գոյքերը ամբողջովին բերում են նոր Եկեղեցին : Նոր Եկեղեցւոյն հովիւն ու քահանան է Վահան Աւաք քահանայ Թաճրեան, որ խնամքով ցուցակագրած է Եկեղեցւոյն սպասները, որոնց մէջ 1758-էն կտորներ կան : Այս քահանան պրպտող և քանասէր մէկն է որ պատրաստած ունի Պաղտատի հին ընտանեաց տոհմածառերը : Ինծի լաւ ընդունելութիւն ըրաւ ամէն կերպով օժանդակելով, թէև կը խոստովանիմ որ իրեն այցելելէս առաջ եղան ոմանք, որոնք զինքը ինծի շատ մութ գոյններով նկարագրեցին : Ճաշտ է որ Պաղտատի հայ գաղութը աւելորդ կոիւներով պառակտած վիճակ մը ունի, եկուորի եւ զրսեցիի, որոնց մէջ կուսակցութիւններն ալ անփառունակ դեր մը կը խաղան, մինչ անդին անազին բան կայ ընելիք : Այս վիճակը քիչ մը յուսահատեցուցիւ երեսոյթ մը ունի հասարակօրէն բոլոր Հայ գաղութներուն մէջ, և յանուն աղգային ապահովութեան եւ յառաջացման՝ ժամանակն է որ աղղու միջոցներով վերջացուին :

Ուիլիքա Գանգաւ

Յ. ԳԻԻՐՏԵԱՆ

U. S. A.

ԸՆԹԵՐՑՈՂԷՆ՝ ԱՌ ԽՍԲԱԳԻՐՆ

ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒ ՏԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առ Մեծարգոյ Խմբագրութիւն

ՍԻՆ Ամսագրի

յերուսաղեմ

Սիոնի Նոյեմբերի թիւն տարւոյս (էջ 361-362) կը բովանդակէ յօդուած մի՝ վպատասխանի հարցման թէ՛ «ի՞նչ տարբերութիւն կայ Հայ Առաքելական, Բողոքական և Կաթոլիկ եկեղեցիներու միջև», յորում գտանին քանի մի անճշգրտութիւնք և վրէպ կարծիք՝ որք գուցէ թիւրիմացութեանց և հակաճառութեանց տալիք տան, և յորոց զգլխաւորս հարկ թուի ինձ ուղղել :

Ա. Մեծարգոյ յօդուածագիրն յայլոց միջի (յէջն 362) ասէ՝ «Բողոքականները որոնք բազմապիսակ [թուի թէ ընթեռնիլ՝ բազմատեսակ] են, արդէն բառին բուն իմաստով եկեղեցի չունին» . և սակաւ ինչ կը կրկնէ թէ՛ «Իսկ Բողոքականը եկեղեցի չէ ըսինք արդէն» :

Սոյնպիսի կարծեաց յառաջագոյն եւս պատահած եմ ի Սիոնի, բայց սակայն անճշգրիտ են :

Արգարեւ Բողոքականութիւնն ըստ ինքեան մի միայն եկեղեցի չէ՛, այլ մանաւանդ թէ զայլեւայլ եկեղեցիս կը բովանդակէ, որպէս (թող չպէտպէս յարանուանութիւնս) զԼուքերականն, զՆորաձեւեալն («Բէֆօրմէ»), զՄիստրեալն կամ զԱւեստականն, և զԵպիսկոպոսականն կամ զԱնգլիկանն, յորոց իւրաքանչիւր առանձինն, անկախ՝ ինքնօրէն՝ կազմակերպեալ և միանդամայն պետական եկեղեցիք են :

Իսկ վասն «բուն իմաստին» բառիս եկեղեցի, պէտք է ի հարկէ գիմել ի Ս. Գիրքս, ուր թէ՛ ի Հին և թէ՛ ի Նոր Կտակարանի յաճախագոյն և կիրարկեալ է բառը և այն՝ պէտպէս մտօք :

Յայտ է թէ ծաղումն բառիս եկեղեցի յունական է և ճշգրիտ կը նշանակէ՝ գումար

րումն կոչեցելոց, ուստի ժողով և ժողովուրդ, նաև փոխարեքսորաբ՝ ժողովեցո՛ւ Բուն կիւրարկութիւն նորին Հրէական է, ըստ Թարգմանութեան Եւթանանից. և յայտ առնէ զգի մի վայր զայն ժողովրդեան վասն խորհրդակցութեանս (այսպէս իմանալի է զ. օր. Գծ 19, 39 ուր Հայ Թարգմանիչն ունի ժողով), ըստ այսմ և համախմբեալ յազմութիւն մարդկան, ևս և ամբոյս (զ. օր. Գծ 19, 32. 39. 41): Նմանապէս՝ միաբանութիւն ժողովրդեան Իսրայելի (Գծ 7, 38 և Եր. 2, 12), իբրեւ քաղաքականօրէն և կրօնապէս անջատեալ յայնոց ազգաց:

Իսկ քրիստոնեայք անգոստին ի սկըզբանէ իւրեանց սեպականեցին զյորջորջումն եկեղեցի և պատշաճեցուցին զայն ի ժողովս ի Բրիստո հասարակացոց: Զսոյնգուհակ իմաստ բառիս, քրիստոնէական առամբ, է.

(ա) թովանդակ հասարակութիւն, միաբանութիւն ֆրիսոնեկից, հաղորդութիւն ֆրիսոնեկութեան, թուն իսկ ֆրիսոնեկական եկեղեցին (զ. օր. Մթ 16, 18. Գծ 2, 17: 5, 11: 9, 31: 20, 28: 1 Կր 6, 4: 11, 22: 12, 28: 15, 9: Եփ 1, 22: 3, 10: Փայ 3, 6: Կղ 1, 18. 24: Գղ 1, 13: 1 Տմ 3, 15, ալլոգքն հանդերձ):

(բ) անձնիւր ժողով ֆրիսոնեկից առանձինն ի տեղիս տեղիս (զ. օր. Գծ 8, 3: 1 Կր 4, 17: Գղ 1, 22: Փայ 4, 15: 3 ՅՆ 3: Նմանապէս Բծ 8, 1: 12, 22: Հո 16, 1: Կղ 4, 16: 1 Թս 1, 1: 2 Թս 1, 1 և յալլ բազում տեղիս:

(գ) առնինն եկեղեցի (տ. Հո 16, 5: 1 Կր 16, 19: Կղ 4, 15 և Փմ 2.

(դ) եկեղեցիք անդրանկաց գրեւոց յերկինս.

(ե) բուն իսկ ժողով՝ ակումբ ժողովրդեան, և ի մի վայր ժողովելն յեկեղեցին (հմտ. 1 Կր 11, 18: 14, 19. 34. 35):—

Առ այս ի դէպ է արդեւք յաւելուլ հատածս քանի մի ի «Սահմանադրութենէ կարգաց» Սրբոյն Սահակայ Հայրապետին.

«Բանգի եկեղեցի մեզ ո՛չ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ ի քաբանց և ի

փայտից է շինեալ. այլ զհաւատով շինեալ զազգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան. ապա ուրեմն ճշմարիտ հաւատն է եկեղեցի». «ապա՝ տեսունե՛ս զի ոչ եթէ զխորանն կոչեաց եկեղեցի, . . . այլ զհաւատացեալ ժողովուրդն կոչէ եկեղեցի»: Եւ խոնարհագոյն ևս իջեալ ասէ՝ «Այս է խորհուրդն եկեղեցւոյ. զայս ուսաք ասել կաթողիկէ առաքելական եկեղեցի. զի ընդ ամենայն ժնգերս հաւատացեալք ի Բրիստո՝ առաքելական յորջորջին եկեղեցի: Իսկ տեղին ուր ժողովին քրիստոնեայք անուանին ժողովրդանոց, նաև աղօթարանք կամ սրբարանք . . ., զորս «սովորութիւն եղև եկեղեցի անուանել յարանունարար և ո՛չ բնաւորապէս».— Ապա յետոյ յարէ՝ «նոյնպէս և ժողովրդանոց և մատուցել՝ զոր սովորութիւն եղև ի վաղընջուց հետէ կոչել եկեղեցիս. թէպէտ և բազում են ըստ գիւղից գիւղից և քաղաքաց քաղաքաց, սակայն ոչ են բազումք ի բազումս բաժանեալ, այլ միեւնոյն խորհուրդ կատարի յամենեօրէն» ևս.։—

Եւ արդ՝ ի վերագոյն ճառելոցս յայտ յանդիման ցուցաւ թէ զի՛նչ է թուն իմաստ իսկ եկեղեցի: Ապա ուրեմն, ըստ այսմ, չէ՛ օրէն և իրաւացի պնդել՝ թէ ի վերանոր յիշեալ բողոքական կազմակերպեալ կրօնական հասարակութիւնք եկեղեցի չեն: Ո՞չ ապաքէն նա ինքն իսկ, Մեծարգոյ Յօդուածագիրն, զեպիսկոպոսական (Անգլիկան) եկեղեցին, որ առանց ամենայն հակառակութեան մին է ի բողոքական եկեղեցեաց, ի թիւ օրինաւոր եկեղեցեաց կարգած է (էջ 362, տ. 16 ի ներք.): Իսկ եթէ ալլոգք իմն իմանալի է բուն իմաստ եկեղեցւոյ, յայնժամ պարտ անհրաժեշտ էր յայննապէս տալ զսահման բառիդ ըստ իւրական իմացութեան, առ ի լուսարանելոյ զառաջակայ խնդիր:

Հուսկ ուրեմն կամ է ինձ հարցանել և զայս ինչ՝ թէ որովհետեւ Պապական եկեղեցին սկզբամբ զայլ ինչ եկեղեցի ո՛չ ճանաչէ և ո՛չ ընդունի — վասնզի «արտաքոյ Հռովմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն» — միթէ արժան է ասել՝ թէ Առաքելական եկեղեցին Հայաստանեայց եկեղեցի չէ՛:

Բ. «Մենք գիտենք թէ Ս. Գիրքը չիտակ հասկնալ և անկէ որոշ կանոններ հանել որքան զժուար է՝ մանաւանդ անոնց

համար որ ժամանակ չեն ունենար զայն սերտելու».— այս խօսք (էջ 362) ապաքէն օտարութի իմն թուի ինձ: Առ այս աւելորդ իսկ է երկայնարանել. չա՛տ լիցի ասել թէ՛ ճշմարիտ հուստացեալ՝ բարեպաշտ քրիստոնեայն ոչինչ մթին, զժուարիմաց եւ զժուարալոյծ կը գտանէ ի Ս. Գիրս նոր կտակարանի: Հանդերձ այնու պարտ է իւրաքանչիւր քրիստոնէի փոյթ ունել հանապազ զՍ. Գիրս Ն. Կ. ընթեռնուլ, քննել եւ ի միտ առնուլ. էական գլխաւոր մասունք նորին, կարծեմ թէ, ամենայն յօժարամիտ ընթերցողի մէկին եւ զիւրահաս են՝ առ ի կարող լինելոյ զգործութիւն բանից Ս. Գրքոցս զլիտակ հասկնալ եւ անկէ որոշ կանոններ հանելոյ:

Գ. Դարձեալ օտարութի եւ նորանշան են հետազայ բանք.

«Բողոքականները . . . ոչինչ ունին մեր Հաւատարմին համապատասխանող»:

Սոյն այս կարծիք իրաւացի չեն, զի ո՛չ միաբանին ճշմարտութեան եւ իսկական հանգամանաց իրաց:

Վասն է՞ր անգիտանալ զԱռաքելական կոչեցեալ Սոսմոսմոսքիւն Հաւատոց, կամ զԱռաքելական Հանգանակն, որոյ ծագումն յոյժ հին է եւ՝ ըստ ամենայն հաւանականութեան՝ ելանէ մինչեւ ցղարն Բ., ուստի կարի կանխադոյն քան զՆիկիական-Կոստանդնուպոլսական Հանգանակն: Չոյն Առաքելական Հանգանակ, որ յառաջին ժամանակս բազում ուրեք, թէ՛ յարեւելս եւ թէ՛ մանաւանդ յարեւմուտս (առաւելապէս ի լատինական եկեղեցւոյ) ի սովորութեան էր, կ'ընդունին եւ ի կիր առնուն գէթ ինձ ծանօթ գլխաւոր բողոքական եկեղեցիք, Եպիսկոպոսականն (Անգլիկանն), Լութերականն եւ Աւետարանականն, եւ ըստ կանոնաց կ'ընթեռնուն զնոյնն յեկեղեցիս իւրեանց ի ժամու Աստուածեղէն պաշտամանց: Աւելորդ չէ թերեւ աստէն յառաջ բերել զայն ճշգրիտ թարգմանութեամբ, որ ունի օրինակ զայս.

«Հաւատամ յԱստուած, Հայրն Ամենակալ, Արարիչ երկնից եւ երկրի. եւ ի Յիսուս Գրիստոս յորդին նորա միածին, ի մի Տէր մեր, որ յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ եւ ծնաւ ի Մարիամոյ Կուսէն. չարչարեալ եւ խաչեալ առ Պոնտապոլ Պիղատոսիւ,

մեռեալ եւ թաղեալ. էջ ի դժոխս, յաւուր երրորդի յարեալ ի մեռելոց. ելեալ ի յերկինս, նստաւ ընդ աջմէ Աստուծոյ Հօր Ամենակալի. ուստի գալոց է ի գատել զկենդանիս եւ զմեռեալս: Հաւատամ ի Հոգին Սուրբ, ի սուրբ կաթողիկէ եկեղեցի, ի հաղորդութիւն սրբոց, ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն մարմնոյ, ի կեանսն յաւիտենականս»:

Եւ ո՛չ այսպիսի միայն, այլ վերասացեալ բողոքական եկեղեցիք, որպէս մանաւանդ Եպիսկոպոսականն (Անգլիկանն), սովոր են ի կարգի ժամասացութեան ընթեռնուլ նաեւ զԱրամատեան Հանգանակն Հաւատոց, որ յայտ է թէ առաւել եւս ընդարձակ է: Նոյնպէս ընդունելի համարեալ են եւ Նիկիականն եւ Կոստանդնուպոլսականն:

Գ. ի կատարած ամենայնի ի գէպ համարիմ յաւելուլ եւ զայս ինչ՝ թէ «Հայոց եկեղեցի» Օրմանեանի ճշմարտութեամբ ընտիր՝ նշանաւոր՝ օգտակար գիրք մի է, այլ ո՛չ զերծ յինչ ինչ թերութեանց եւ թերութեանց: Բարեյիշատակ Օրմանեան թէպէտ եւ բազմամուտ՝ երեւելի՝ հոյակապ գիտուն մի էր, բայց սակայն իւր գիտութիւն եւ ուսումնական աշխարհայեցողութիւն ի բնէ Հոռոմէական խմբով զանդեալ էր, եւ նմին իրի նա ինքն Հոռոմէական-կաթոլիկ տկնոցով նկատած՝ գիտած եւ ի քնին արկեալ զատած էր զամենայն պատմական եւ եկեղեցական գէպս եւ հանգամանս իրաց:

20 Դեկտ. 1930

Յ. Յ. Մ.

ԾԱՆՈԹ.— Յարգելի գիտնական յոյուածագրին ուշադրութեան վրիպած կ'երեւին կարեւոր քանի մը կէտեր՝ որոնց պիտի անդրադառնամք ՍԻՈՆի գալ թիւին մէջ:

Տ. Վ. Ն.